ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 14 փետրվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գալուստ Շիրինյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Գալուստ Շիրինյանը 02.02.2012թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 32-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր»:

Դիմողի կարծիքով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածն անհնար է դարձնում անձի իրավունքների պաշտպանությունն այն դեպքերում, երբ գործատուն խախտել է աշխատանքի ընդունման սահմանված կարգը (չի կնքել աշխատանքային պայմանագիր, չի ընդունել անհատական իրավական ակտ) կամ աշխատողի մոտ որեւէ պատճառով չի պահպանվել աշխատանքային պայմանագրի իր օրինակը:

Դիմողը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածն այնքանով, որքանով խոչընդոտում է փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց իրավունքների պաշտպանությանը, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 32-րդ հոդվածներին:

Խնդրո առարկա անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Գալուստ Շիրինյանի անհատական դիմումով գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

14 փետրվարի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-5